<ul style="list-style-type: none"> <li>բանավեճ:</li> </ul> <p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Ստուգարրով գնահատվում է վերջնարդունքների ձևավորում՝ անց է կացվում բանավոր հարցում:</p> <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: <b>Թեմա 2.</b> Հասկացություն: <b>Թեմա 3.</b> Դատողություն: <b>Թեմա 4.</b> Տրամաբանության օրենքները: <b>Թեմա 5.</b> Մտահանգում: <b>Թեմա 6.</b> Ապացուցում և հերքում: <b>Թեմա 7.</b> Պարալոգիզմ, սովորություն, սրամություն, Պարադրություն: Հիպոթեզ:</p> <p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976:</li> <li>Կոնդակով Հ., Լոգիческий словарь, М., 1975.</li> <li>Գետման Ա., Լогика, М., 1993.</li> <li>Маковелский А., История логики, М., 1967.</li> <li>Демидов И., Логика, М., 2004:</li> </ol>
---

<p><b>1.0304/B16</b></p> <p><b>4.2.5 Ժամ/շաբ.</b></p> <p><b>6.4-րդ կիսամյակ</b></p>	<p><b>2.Քաղաքագիտության հիմունքներ</b></p> <p><b>5.10/0/0</b></p> <p><b>7.Ստուգարը</b></p>	<p><b>3.2 ECTS կրեդիտ</b></p>
<p><b>8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները,</li> <li>ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները</li> <li>ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:</li> </ul> <p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները,</li> <li>ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները,</li> <li>թվարկելու ու մեկնաբանել պետական կառավարման ձևերը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները,</li> <li>մեկնաբանելու քաղաքական զարաֆարախոսություն հասկացությունը,</li> <li>մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:</li> </ol> <p><b>գ. ընդհանուրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>աշխատելու թիմում:</li> </ol> <p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարրեր աղբյուրներից հայթայրված տեղեկատվությունը,</b></p> <p><b>Գ.5.գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը,</b></p> <p><b>Գ.7.ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելազորման համար:</b></p> <p><b>11.Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>դասախոսություն</li> <li>քննարկումներ</li> <li>բանավեճեր</li> <li>գեկուցումներ:</li> </ul> <p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Ստուգարրն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարը համարվում է հանձնաված:</p> <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: <b>Թեմա 2.</b> Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: <b>Թեմա 3.</b> Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: <b>Թեմա 4.</b> Քաղաքական ընտրանի /էլիտա/: <b>Թեմա 5.</b> Քաղաքական լիդերություն: <b>Թեմա 6.</b> Քաղաքական ռեժիմներ: <b>Թեմա 7.</b> Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի զիսավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: <b>Թեմա 8.</b> Քաղա-</p>		

քական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ըստրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 12.** Գաղափարախոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: **Թեմա 15.** Քաղաքական մշակույթ:

#### **14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Եր., 2006:
2. Բորենկո В., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, М., 2004.
3. Гаджиев К., Политология. М., 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, М., 1999.
5. Пушкирева Г., Политология. Изд-во Айрис-пресс, М., 2002.
6. Мальцев В., Основы политологии. Изд-во ИТРССПП, М., 1998.

<b>1.0303/B16</b>	<b>2.Սոցիոլոգիայի հիմունքներ</b>	<b>3.2 ECTS կրեդիտ</b>
<b>4.2.5 Ժամ/շաբ</b>	<b>5.10/0/0</b>	
<b>6.4-րդ կիսամյակ</b>	<b>7.Սոուչարք</b>	

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիայի՝ որպես գիտության կայացման առանձնահատկություններին, գիտությունների համակարգում սոցիոլոգիայի տեղին ու դերին, սոցիոլոգիայի աշխարհայացքային և էթիկական առանձնահատկություններին, հասարակությանը և դրա կառուցվածքին, սոցիոլոգիայի հիմնական և հիմնարար տեսություններին, մշակույթին և դրա տարրերին, ինչպես նաև հասարակության մեջ տեղի ունեցող մի շաբք սոցիալական գործընթացներին ու առկա հիմնախնդիրներին:

#### **Դասընթացի խնդիրներն են:**

- ուսանողին ուսուցանել դիսցիպլինի ուսումնասիրության առարկան և մեթոդները,
- ձևավորել իմացություն սոցիալական պետությունը և արդարության սկզբունքները,
- ծանոթացնել սոցիալական անհավասարապետյունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունները,
- ձևավորել անտեսագիտական մտածողություն սոցիալական շերտավորման հիմնախնդիրները տնտեսությունում,
- ծանոթացնել եկամուտների անհավասարությունը և այն պայմանվորող գործոնները:
- կենսամակարդակի և կյանքի որակի ցուցանիշները,
- ճիշտ պատկերացում ունենան աղքատության վերաբերյալ, նրա դրսնորման ձևերի և չափման եղանակների,
- ծանոթացնել գործազրկության և զբաղվածության սոցիալ- տնտեսական ասպեկտներին:
- ուսանողին ուսուցանել աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքերը,
- ծանոթացնել սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում,

#### **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝**

**ա.մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Վերարտադրելու դասընթացի բովանդակությունը,
2. Մատնանշելու սոցիոլոգիայի առանձնահատկությունները,
3. Մատնանշելու աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքեր:

**բ.գործնական մասնագիտական կարողություններ**

1. հետազոտություններում կիրառելու սոցիոլոգիական մեթոդներ,
2. համակարգելու սոցիալական անհավասարությունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունը,
3. ներկայացնելու սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում:

**գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. տիրապետելու սոցիոլոգիայի մեթոդներին, սոցիալական պետության և արդարության սկզբունքներին,
2. տիրապետելու կենսամակարդակի և կյանքի որակի ցուցանիշներին, աղքատության պատկերի, դրսնորման ձևերի և չափման եղանակներին,
3. տիրապետելու սոցիալական փոխանցություններին և շարժումներին:

#### **10.Դասընթացը ձևավրում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

- Բ5.** քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,
- Գ1.** որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարրեր աղբյուրներից հայրայթված տեղեկատվությունը,
- Գ6.** գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը,
- Գ7.** ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:

**11. Կիրառավում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- խոսքային մեթոդներ /դասախոսություն, բացատրում, պատմում, երկխոսություն/
- զննական մեթոդներ /դիդակտիկ նյութերի ցուցադրում և այլն/
- գործնական մեթոդներ
- տրամաբանական մեթոդներ
- ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ
- հետաքրքրությունների խթանման մեթոդներ
- համագործակցային ուսուցման մեթոդներ
- քննադատական մտածողության մեթոդներ
- խմբային աշխատանքի մեթոդներ
- վերահսկողության մեթոդներ.

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Սոուզարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Սոցիոլոգիան որպես գիտություն. կայացման առանձնահատկությունները: **Թեմա 2.** Սոցիոլոգիայի օբյեկտն ու առարկան. մոտեցումներ և տեսական պարագամաներ: Սոցիոլոգիան գիտությունների համակարգում: **Թեմա 3.** Սոցիոլոգիական աշխարհայցը և սոցիոլոգիական էֆեկտ: **Թեմա 4.** Սոցիոլոգիական գիտելիքի կառուցվածքը: **Թեմա 5.** Կիրառական սոցիոլոգիա: **Թեմա 6.** Հասարակությունը որպես սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկա. հասարակության սոցիալական կառուցվածքը: **Թեմա 7.** Հասարակություն և սոցիալական ինստիտուտներ: **Թեմա 8.** Սոցիալական խմբեր և կազմակերպություններ: **Թեմա 9.** Հասարակություն և անձ. Սոցիալական փոխագրեցություն և սոցիալականացում: **Թեմա 10.** Շերպող վարք և սոցիալական վերահսկողություն: **Թեմա 11.** Սոցիալական անհավասարություն և շերտավորում: **Թեմա 12.** Ազգարնակչություն, ուրբանիզացիա և միգրացիա: **Թեմա 13.** Սոցիալական փոփոխություններ և շարժումներ:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Կյուրելյան Է.՝ Կիրառական սոցիոլոգիա (ուսումնական ձեռնարկ), Ճարտարագետ, Եր., 2006:
2. Կրավченко А., Социология, М., 2005.
3. Рысь Ю., Социология, М., 2005.
4. Волков Ю., Социология, М., 2010.
5. Голенкова З., Общая социология, М., 2005.
6. Тощенко Т., Социология, М., 2005.

**ՄԱՍՍԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍՍ****(ՊԱՐՏԱԴՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)**

<b>1.0105/B17</b>	<b>2. Մաթեմատիկական անալիզ-1</b>	<b>3.6 ECTS կրեդիտ</b>
<b>4.7 Ժամ/շաբ.</b>	<b>5.14/14/0</b>	
<b>6.1-ին կիսամյակ</b>	<b>7. Եզրափակիչ գնահատումով</b>	

**8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մաթեմատիկական անալիզի ներածական մասը՝ իրական թվեր, հաջորդականություն, ֆունկցիա, սահման, անընդհատություն, ածանցյալ, կիրառություններ:**

**Դասընթացի խնդիրներ են**

- ձևավորել մաթեմատիկական հիմնարար պատրաստվածության անհրաժեշտ մակարդակի,
- կողմնարոշել կիրառական խնդիրներ լուծելու ժամանակ օգտվել մաթեմատիկական մեթոդներից,
- զարգացնել տրամաբանական մտածողություն:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝****ա. մասնագիտական գիտելիք և խմացություն**

1. սահմանելու հաջորդականության և ֆունկցիայի սահմանների, անընդհատ ֆունկցիաների, ածանցյալի հիմնական հաստությունները,
2. ներկայացնելու մաթեմատիկական անալիզի ներածական մասի հիմնական գաղափարներն ու սահմանումները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. հաշվելու հաջորդականության և ֆունկցիայի սահմանները,
2. պարզելու ֆունկցիայի անընդհատությունը,
3. հաշվելու ածանցյալներ:

**գ. քննիանութական/իդոխանցելի կարողություններ**

1. կիրառելու յուրացրած մաթեմատիկական գաղափարները տնտեսագիտության մեջ:

<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b> Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. <b>Ա.1.</b> Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները. <b>Գ.2.</b> որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնարաներու տարբեր աղյուսներից հայթայթված տեղեկատվությունը. <b>Գ.6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքիները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:</b>
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b> <ul style="list-style-type: none"><li>• դասախոսություն</li><li>• սեմինար</li></ul>
<b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> <b>1-ին ընթացիկ քննությունն</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b> , հարցատոմար պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է: <b>2-րդ ընթացիկ քննությունն</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b> , հարցատոմար պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է: <b>Եզրափակիչ քննությունն</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր): <b>Ընթացիկ ստուգումներ</b> առավելագույնը <b>3 միավոր</b> . Կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b> <b>Թեմա 1.</b> Թվային հաշորդականություններ և շարքեր: <b>Թեմա 2.</b> Ֆունկցիայի սահման: <b>Թեմա 3.</b> Ֆունկցիայի անընդհատություն, անընդհատ ֆունկցիաների հատկությունները: <b>Թեմա 4.</b> Ածանցիալ և լոգարիթմական ածանցիալ: <b>Թեմա 5.</b> Անորոշությունների բացահայտման Լովիտայի կանոնները:
<b>14.Հիմնական գրականության ցանկ.</b> <ol style="list-style-type: none"><li>Գևորգյան Գ., և ուրիշներ, Մաթեմատիկական անպիտի խնդրագիրք, հ. 1, Եր., 2002:</li><li>Մովսիսյան Յուլ., Բարձրագույն հանրահաշիվ, Եր., 1983:</li><li>Նիկոլյսկի Ս., Մաթեմատիկական անալիզ, տ 1, 2, Մ., 1999.</li><li>Կուդրյավցև, Կուրս մաթեմատիկական անալիզի, տ 1, Մ., 1999.</li></ol>

1.0105/B20	2.Սարեմատիկական անալիզ-2	3.5 ECTS կրետիս
<b>4.6 Ժամ/շաբ.</b>	<b>5.10/14/0</b>	
<b>6.2-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումն</b>	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևակորել համապատասխան մաթեմատիկական հենք՝ մասնագիտական առարկաների յուրացման համար:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b> <ul style="list-style-type: none"><li>• ուսումնասիրել մաթեմատիկական խնդիրների հետազոտման մեթոդները,</li><li>• ծանոթացնել մաթեմատիկական կիրառական խնդիրների ձևակերպման, վերլուծության կանոններին,</li><li>• զարգացնել ալգորիթմիկ մտածողություն,</li><li>• ձևակորել մաթեմատիկական գիտելքների խնդրացման ունակություններ:</li></ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b> <b>ա. մասնագիտական գիտելքի և իմացություն</b>		
1. սահմանելու և մեկնարանելու, ինտեգրելի ֆունկցիաների և ինտեգրալի հատկությունները:		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
1. հետազոտելու թվային շարքերի գուգամիտությունը,		
2. հաշվելու անորոշ և որոշյալ ինտեգրալներ,		
3. կիրառելու մաթեմատիկական խնդիրների հետազոտման մեթոդները տնտեսագիտության մեջ,		
<b>գ. ընթանարական/փոխանցելի կարողություններ</b>		
1. կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելքները տնտեսագիտության խնդիրներում:		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա.1.</b> Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները.		
<b>Բ.3.</b> կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնարանման համար,		
<b>Գ.2.</b> որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնարաներու տարբեր աղյուսներից հայթայթված տեղեկատվությունը,		
<b>Գ.6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքիները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:</b>		

**11. Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն
- սեմինար,
- անհատական աշխատանք:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**1-ին ընթացիկ քննություն.** գրավոր՝ առավելագույնը **4 միավոր**, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:

**2-րդ ընթացիկ քննություն.** գրավոր՝ առավելագույնը **4 միավոր**, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:

**Եզրափակիչ քննություն.** Բանավոր՝ առավելագույնը **9 միավոր** քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց, 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):

**Հերացիկ ստուգումներ.** առավելագույնը **3 միավոր**, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջարքանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից:**

**Թեմա 1.** Ֆունկցիայի էքստրեմումի անհրաժեշտ և բավարար պայմանները: **Թեմա 2.** Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները՝ Ռոլի, Լագրանժի և Կուշիի թեորեմները: **Թեմա 3.** Թեյլորի բանաձեռ և նրա մեացորդային անդամը: **Թեմա 4.** Ֆունկցիայի գրաֆիկի ասիմպտոտները: Ֆունկցիայի գրաֆիկի ուռուցիկությունը, շրջման կետեր: **Թեմա 5.** Անընդհատ ֆունկցիայի մեծագույն և փորբագույն արժեքները հատվածում: Մեկ փոփոխականի ֆունկցիայի գրաֆիկի կառուցման փուլերը: **Թեմա 6.** Նախնական ֆունկցիա և անորոշ ինտեգրալ: Անորոշ ինտեգրալի հասլությունները: **Թեմա 7.** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձեռները անորոշ ինտեգրալում: **Թեմա 8.** Որոշյալ ինտեգրալի սահմանումը, կորպաֆի սեղանի մակերեսի հաշվումը, տնտեսագիտական խնդիրներ: **Թեմա 9.** Դարբուի գումարները և նրանց հատկությունները: Որոշյալ ինտեգրալի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը: **Թեմա 10.** Ինտեգրելի ֆունկցիաների դասերը՝ անընդհատ ֆունկցիայի և մոնոտոն, սահմանափակ ֆունկցիայի ինտեգրելի խորոշությունը: **Թեմա 11.** Որոշյալ ինտեգրալի հասկությունները: Միջին արժեքի թեորեմ: **Թեմա 12.** Փոփոխական վերին սահմանով ինտեգրալի անընդհատությունը, դիֆերենցելիությունը: **Թեմա 13.** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձեռները որոշյալ ինտեգրալում: **Թեմա 14.** Որոշյալ ինտեգրալի կիրառությունները բնագիտությունում և տնտեսագիտությունում: **Թեմա 15.** Անխոկական ինտեգրալներ: I և II սեղի անխոկական ինտեգրալների գուգամիտությունը: **Թեմա 16.** Սովորական դիֆերենցիալ հավասարումների տեսության տարրերը:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Գևորգյան Գ. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզի խնդրագիրը, հ. 2, Եր., 2003:
2. Ղազարյան Հ. և ուրիշներ, Սովորական դիֆերենցիալ հավասարումներ, Եր., 2002:
3. Ղազարյան Հ. և ուրիշներ, Սովորական դիֆերենցիալ հավասարումների խնդրագիրը, Եր., 1987:
4. Մովսիսյան Յուլ., Բարձրագույն հանրահաշվի, Եր., 1983:
5. Օհանյան Վ., Մաթեմատիկական անալիզ: Դասախոսություններ, առաջին մաս, Եր., 2008:

1.0201/B18	2. Տնտեսագիտության տեսություն-1	3.6 ECTS կրեդիտ
4.7 Ժամ/շաբ	5.14/0/14	
6.2-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումներ	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ հաղորդել տնտեսագիտության տեսության միկրո մակարդակին առնչվող տնտեսագիտական հասկացությունների, հիմնարար սկզբունքների յուրացման, տնտեսագիտական փաստարկները և հիմնահարցերը հասկանալու, գնահատելու և կիրառելու վերաբերյալ:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տալ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և դրանք միկրոմակարդակում կիրառելու համար,</li> <li>• ստեղծել անհրաժեշտ հիմքեր միկրոտնտեսագիտական դասընթացների յուրացման համար:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք</b>		
<b>ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Տնտեսագիտական բազային հասկացությունների,</li> <li>2. Տնտեսական ինստիտուտների, օրենքների,</li> <li>3. Շուկայի պարամետրերի և շուկայական մոդելների,</li> <li>4. Սպառողների և ապրանքատերերի վարքագծերի,</li> <li>5. Ռեսուրսների շուկաների առանձնահատկությունների,</li> <li>6. Շուկայականի հիմնական մոդելների,</li> <li>7. Շուկայի ձախողումների և նրանց կարգավորման ուղիների վերաբերյալ:</li> </ol>		

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. տնտեսական իրավիճակները վերլուծելու,
2. տեսական գիտելիքները կիրառելու:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. տնտեսագիտական խնդիրներ լուծելու,
2. մասնագիտական վերլուծություններ կատարելու,
3. տնտեսական իրավիճակներ մեկնաբանելու:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա7. բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները,**

**Բ1. կիրառելու տնտեսամաքանական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար,**

**Բ3. կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար:**

**Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),**

**Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:**

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն,
- հարցում,
- քննարկումներ,
- խնդիրների լուծում, տնային առաջադրանքի կատարում,
- խմբային աշխատանք,
- ինքնուրույն աշխատանք:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

- 1-ին ընթացիկ քննություն. Բաղադրիչներն են՝ 2 տեսական հարց, 1 խնդիր: Գնահատման քայլը՝ 0.5-առավելագույնը 4 միավոր:
- 2-րդ ընթացիկ քննություն. Բաղադրիչներն են՝ 2 տեսական հարց, 1 խնդիր: Գնահատման քայլը՝ 0.5 -առավելագույնը 4 միավոր:
- Եզրափակիչ քննություն. առավելագույնը 9 միավոր, 3 տեսական հարց, որոնցից առաջինը-4, երկրորդը -3 և երրորդը- 2 միավոր: Գնահատման քայլը՝ 0.5 միավոր:
- Ընթացիկ սոուլում առավելագույնը 1 միավոր:
- Ինքնուրույն աշխատանք առավելագույնը 1 միավոր:
- Մասնակցություն՝ առավելագույնը 1 միավոր:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1. Տնտեսագիտության ներածություն: Թեմա 2. Շուկայական համա-կարգ: Պահանջարկը, առաջարկը**

**և շուկայական հավասարակշռությունը: Թեմա 3. Պահանջարկի և առաջարկի առաձգականությունները:**

**Թեմա 4. Սպառողի վարքի վերլուծությունը: Թեմա 5. Արտադրողի վարքը և տեխնոլոգիայի ընտրությունը:**

**Արտադրական ֆունկցիան: Թեմա 6. Արտադրության ծախսերը: Թեմա 7. Մրցակցային ձեռնարկությունները և մրցակցային շուկաները: Թեմա 8. Մենաշնորհի շուկայական տնտեսությունում: Թեմա 9. Անկատար մրցակցությունը. մենաշնորհային մրցակցությունը և օլիգոպոլիան: Թեմա 10. Արտադրության գործուների շուկան. աշխատանքը, հոդը և կապիտալը:**

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Տնտեսագիտության տեսություն: Ուս. Զեռնարկ, Հ.Աղաջանյան, Եր. 2021:
2. K.P.Макконнелл, С.Л.Брио, III.М.Флинн, Экономикс, 18-ое изд., М., 2011.
3. Курс экономической теории, под ред. А.В.Сидоровича, М., 2009.

**Լրացուցիչ գրականություն**

4. Սարգսյան Հ., Մարգարյան Հ., Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 2-րդ հրատ., Եր., 2017:
5. Հորեև Р., Сборник задач по микроэкономике, М., 2003.

1.0201/B20	2. Տնտեսագիտության տեսություն-2	3.6 ECTS կրեդիտ
4.7 ժամ/շաբ.	5.14/0/14	
6.3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է լուսաբանել շուկայական տնտեսության՝ որպես ամրողական համակարգի գործառնության մակրոտնտեսական օրինաչափությունները, տալ անհրաժեշտ գիտելիքներ և օժանդակել բավարար ունակությունների ձևաբանմանը մակրոտնտեսական իրավիճակները վերլուծելու և հետազայում		

ուսուցանվող տնտեսագիտական մյուս դասընթացների նյութը առավել հիմնավոր յուրացնելու համար:

### Դասընթացի խնդիրներն են.

- ուսանողներին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տալ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և դրանք վերլուծության միջոցով մակրոմակարդակում կիրառելու համար,
- ստեղծել անհրաժեշտ հիմքեր մակրոտնտեսագիտական դասընթացների յուրացման համար:

### 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝

#### ա. մասնագիտական գիտելիք և խնացություն

- ներկայացնելու մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները,
- բացատրելու մակրոտնտեսական հավասարակշռության մոդելները:

#### բ. գործնական մասնագիտական կարողություններ

- վերլուծելու պետության տնտեսական քաղաքականության նպատակները և եղանակները,
- մեկնաբանելու տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշները:

#### գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

- մեկնաբանելու միկրոտնտեսագիտական հիմնարար հասկացությունները և սկզբունքները և դրանք կիրառելու միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական, ինչպես նաև ճյուղային ու գործառնական բնույթի տեսական և հասուլ դասընթացներում:

### 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա7. բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները,

Ա8. մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,

Բ1. կիրառելու տնտեսամարթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար,

Բ3. կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար,

Բ5. քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,

Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղյուրներից (խնտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),

Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:

### 11. Կիրառվում են դասականրման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/,
- սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցարրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/,
- ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:

### 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

- 1-ին ընթացիկ քննություն. գրավոր քննություն՝ **4 միավոր** առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:
- 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր քննություն՝ **4 միավոր** առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:
- Եզրափակիչ քննություն. բանափոր քննություն՝ **9 միավոր** առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:
- Ըստացիկ սոսուզում, ինքնուրույն աշխատանք, մասնակցություն, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր:

### 13. Դասընթացը բարկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

**Թեմա 1.** Ազգային արդյունքը: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 2.** Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: **Թեմա 3.** Հիմնական մակրոտնտեսական կախվածությունները: **Թեմա 4.** Ամբողջական ծախտամեջը և արտադրության հավասարակշիռ ծավալը: **Թեմա 5.** Ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը: Հավասարակշռությունը «AD-AS» մոդելում և դրա փոփոխությունները: **Թեմա 6.** Ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 7.** Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականությունը: **Թեմա 8.** Ընդհանուր հավասարակշռությունը՝ «IS-LM» մոդելը: **Թեմա 9.** Տնտեսական աճը: **Թեմա 10.** Մակրոտնտեսական քաղաքականությունը և տեսությունը. բանավիճային հարցեր:

<b>14. Հիմնական գրականության ցանկ</b>
1. Մենքոյ Ն., Մակրոէկոնոմիկա, Եր., 1997:
2. Макконелл К., Брю С., Экономикс: принципы, проблемы и политика, М., 2009.
3. Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հայկ Սարգսյան, Հասմիկ Մարգարյան. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ: Գիտ. խմբ՝ Հ.Աղաջանյան, Գ.Գալստյան, (Երկրորդ հրատարակություն, լրամշակված և վերախմբագրված): - Եր., 2017:
4. Курс экономической теории: учеб. пособие для студентов вузов /под ред. А.В.Сидоровича/; МГУ 3-е изд. – Москва, 2007.
5. Агапова Т., Серегина С., Макроэкономика: Учебник МГУ, М., 2009.

<b>1.0105/B19</b>	<b>2.Գծային հանրահաշվի և անալիտիկ երկրաչափություն</b>	<b>3.4 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 .5 ժամ/շաբ.</b>	<b>5.9/90</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումով</b>	
<b>8.Դասընթացի նպատակն</b> է ուսանողների մոտ ձևավորել վերլուծական երկրաչափության գիտելիքների անհրաժեշտ հենք՝ գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի ուսության մոդելներում օգտագործելու համար:		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>ծանոթացնել ուղղի, հարթության հավասարումներին, ինչպես նաև մատրիցաներին, որոշիչներին և նրանց որոշ հատկություններին,</li> <li>գծային հավասարումների և անհավասարումների համակարգերի լուծման մեթոդներին, տալ ստացված լուծման մեկնարանությունը և պատկերել հնարավորության դեպքում:</li> </ul>		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>բացատրելու գծային հավասարումների համակարգերի լուծման Գառուսի և Կրամերի եղանակները,</li> <li>սահմանելու որոշիչը, հակադարձ և տրանսպոնացված մատրիցները:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>կատարելու գործողություններ վեկտորների և մատրիցների հետ, լուծել գծային հավասարումների և անհավասարումների համակարգեր,</li> <li>հաշվելու տրված վեկտորների սկայար, վեկտորական և խառն արտադրյալները, չվերասերված մատրիցի հակադարձը,</li> <li>հաշվելու երկու ուղիղների, երկու հարթությունների, ուղղի և հարթության կազմած անկյունը, հատման կետը, կետի հեռավորությունն ուղղի և հարթությունից:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները գործնականում,</li> <li>կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները տնտեսագիտության մեջ:</li> </ol>		
<b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա1. Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները,</b>		
<b>Գ2.որոշակի փաստարկների իիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնարանելու տարրեր արյուներից հայրարժված տեղեկատվությունը,</b>		
<b>Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արյունավետ կիրառելու գիտելիքները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:</b>		
<b>11.Կիրառվում են դասավանդման և տուսմանության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>դասախոսություններ</li> <li>խմբային աշխատանքներ</li> <li>անհատական աշխատանք:</li> </ul>		
<b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>		
<b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր առավելագույնը <b>4 միավոր</b> , հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:		
<b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b> , հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:		
<b>Եզրափակիչ քննություն.</b> Բանակոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց, 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):		
<b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b> , կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:		
<b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից</b>		
<b>Թեմա 1.</b> Մատրիցներ և որոշիչներ: <b>Թեմա 2.</b> Գծային հավասարումների համակարգ: <b>Թեմա 3.</b> Վեկտորական		

հանրահաշիվ: **Թեմա 4.** Գծային արտապատկերումներ: **Թեմա 5.** Ուղղի հավասարումը: **Թեմա 6.** Շրջան և էլիպս: **Թեմա 7.** Հիպերբոլ և պարաբոլ: **Թեմա 8.** Ուղղի և հարթության հավասարումը տարածության մեջ:

#### 14.Հիմնական գրականության ցանկ.

1. Փիլիպոսյան Վ., Օհնիկյան Հ., Վերլուծական երկրաչափության խնդրագիրք, Եր., 2011:
2. Գ.Զակորյան, Վերլուծական երկրաչափության և գծային հանրահաշվի խնդրագիրք, տնտեսագետների համար:
3. Բեկлемишев Դ., Կурс аналитической геометрии и линейной алгебры, ФИЗМАТЛИТ, 2005.
4. Ильязова Д., Линейная алгебра и аналитическая геометрия.теория и практика, Ульяновск, 2012.
5. Малугин В., Математика для экономистов. Линейная алгебра, М., 2006.
6. Ефимов Н., Краткий курс аналитической геометрии, М., ФИЗМАТЛИТ, 2014.

1.0104/ B22	2.Տնտեսագիտական ինֆորմատիկա - 1	3.3 ECTS կրեդիտ
4.3.5 ժամ/շաբ.	5.0/14/0	
6.3-րդ կլասսամյակ	7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<b>8. Դասընթացի նպատակն</b> է ուսանողներին ներկայացնել Excel ծրագրային փաթեթով խորը տնտեսագիտական վերլուծություններ կատարելու հմտությունները և սովորեցնել կիրառել դրանք հետազոտական աշխատանքների իրականացման և մասնագիտական գործունեության ընթացքում:		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>ուսանողներին տալ ընդհանուր տեղեկություններ Excel ծրագրային փաթեթի կառուցվածքի, գործիքների և հնարավորությունների մասին,</li> <li>բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը տնտեսագիտական վերլուծություններ կատարելիս,</li> <li>ծանոթացնել Excel համակարգով տնտեսագիտական, մենեջմենթի և մարքետինգի խնդիրները լուծելու, ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների գրաֆիկներ կառուցելու, տեսակավորելու հնարավորություններին:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>թվարկելու Excel ծրագրային փաթեթի կառուցվածքը, գործիքներն և հնարավորությունները,</li> <li>վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային այցուսակներ,</li> <li>ստացած գիտելիքները կիրառելու տնտեսագիտական, մենեջմենթի և մարքետինգի խնդիրները համակարգչի օգնությամբ լուծելիս:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>օգտագործելու Excel ծրագրային փաթեթի հնարավորությունները,</li> <li>էլեկտրոնային այցուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ,</li> <li>կազմելու ձեռնարկության ծախսերի հաշվման ծրագիր,</li> <li>մոդելավորելու և վերլուծելու տնտեսագիտական գործնակարգները ծրագրային փաթեթների միջոցով:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպել խնդիրներ և լուծել:</li> </ol>		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա6.</b> համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,		
<b>Բ10.</b> կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնեսական հաշվարկներ՝ կիրառելով տարրեր համակարգչային ծրագրեր,		
<b>Գ1.</b> օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ):		
<b>Գ6.</b> աշխատել խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ինքնուրույն ձևակերպել խնդիրներ և լուծել:		
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>լարորատոր աշխատանքներ,</li> <li>տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ,</li> <li>թեսու:</li> </ul>		

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

- Ըստացիկ ստուգումներ (ստուգողական գրավոր աշխատանքի և բանավոր հարցման համար)- **7 միավոր**,
- Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը **4 միավոր**,
- Մասնակցություն առավելագույնը- **1 միավոր**
- Եզրափակիչ ընտություն-** առավելագույնը **8 միավոր:** Միավորների քայլը՝ **0.5:**

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.****Թեմա 1.** MS Excel աղյուսակային խմբագիր: **Թեմա 2.** Դիմագրամների կառուցում MS Excel միջավայրում: **Թեմա 3.**Ստանդարտ ֆունկցիաները MS Excel միջավայրում: **Թեմա 4.** Աշխատանք տվյալների բազաների հետ MS Excel միջավայրում: **Թեմա 5.** Տվյալների վերլուծությունը Excel-ում լրացնելու գործիքների միջոցով (Add-Ins): **Թեմա 6.** Տեղեկատվության պաշտպանություն:**14.Հիմնական գրականության ցանկ.**

- Կոսեմյան Ս., MS Excel աղյուսակային խմբագիր (գործնական ձեռնարկ): Ուսումնական ձեռնարկ, Եր., 2017:
- Սարգսյան Վ. և ուրիշներ, Համակարգչային առաջադրանքներ և խնդիրներ Ինֆորմատիկայի հիմունքներ (ըստ կիրառման ոլորտի) առարկայից: Եր., 2018:
- G. Harvey, "Excel 2019 All-in-One For Dummies", 2019.
- J. Walkenbach, "Excel 2016 Bible", 2016.
- Վիլյամս, Microsoft Excel, СПб, Պիտեր, 2008.

1.0104/ B28	2.Տնտեսագիտական ինֆորմատիկա - 2	3.4 ECTS կրեայիտ
<b>4.3.5 Ժամ/շաբ.</b>	<b>5.0/14/0</b>	
<b>6.4-րդ կիսամյակ</b>	<b>7.Առանց ընթացիկ ընտությունների գնահատման</b>	
<b>8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Excel ծրագրային փաթեթով խորը տնտեսագիտական վերլուծություններ կատարելու հմտությունները և սովորեցնել կիրառել դրանք հետազոտական աշխատանքների իրականացման և մասնագիտական գործունեության ընթացքում:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>ծանոթացնել MS EXCEL միջավայրում VBA մակրոսներին,</li> <li>ձևագրել ծրագրեր ստեղծելու հմտություններ,</li> <li>սովորեցնել տարբեր տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով ընտրել համապատասխան ալգորիթմ:</li> </ul>		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու ծրագրային կոդեր,</li> <li>բացատրելու մեջ-ծրագրավորման լեզվի հիմունքները,</li> <li>վերլուծելու և բացատրելու գործնական էթիկայի կանոնները և տնտեսագիտական խնդիրների մարեմատիկական մոդելների լուծումները:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>կազմելու ձեռնարկության ծախսերի հաշվման ծրագիրը,</li> <li>օգտագործելու VBA ծրագրավորման լեզվի հնարավորությունները:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
1. հավաքագրելու, վերլուծելու և պահպանելու տնտեսագիտական խնդիրների մարեմատիկական մոդելների լուծման կարտրագործությունը արդյունքները:		
<b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա6.</b> համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մարեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,		
<b>Բ9.</b> կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր,		
<b>Գ1.</b> օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ):		
<b>Գ6.</b> աշխատել խմբում /թիմում/ գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքիները, ինքնուրույն ձևակերպել խնդիրներ և լուծել:		
<b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>ինքնուրույն աշխատանք</li> <li>թեսու</li> <li>գեկույց</li> </ul>		

<ul style="list-style-type: none"> <li>ծրագրերի մշակում և ավտոմատացում:</li> </ul> <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Եզրափակվիչ քննություն՝ առավելագույնը 8 միավոր,</li> <li>ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 5 միավոր,</li> <li>ընթացիկ ստուգում՝ առավելագույնը 4 միավոր,</li> <li>մասնակցություն՝ առավելագույնը 3 միավոր</li> </ol> <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տվյալների հավաքագրում և մշակում: <b>Թեմա 2.</b> Տվյալների վիզուալիզացում: <b>Թեմա 3.</b> Բանաձևեր և ֆունկցիաներ: <b>Թեմա 4.</b> Հարցումների ձևակերպում և տվյալների փիլտրում: <b>Թեմա 5.</b> Ինչ կլինի երեւ վերլուծություն: <b>Թեմա 6.</b> Վիճակագրական վերլուծության գործիքներ: <b>Թեմա 7.</b> Solver: <b>Թեմա 8.</b> Մակրոսներ: <b>Թեմա 9.</b> Կիրառական վերլուծություններ:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>G. Harvey, "Excel 2019 All-in-One For Dummies", 2019.</li> <li>M. Berenson, D. Levine and T. Krehbiel, Basic Business Statistics, Pearson Ed., 2012.</li> <li>J. Walkenbach, "Excel 2016 Bible", 2016.</li> <li>Слепцова Л.Д., Программирование на VBA в Microsoft Office 2010. М. : Издательский дом "Вильямс", 2010.</li> <li>Уокенбах Джон, Профессиональное программирование на VBA в Excel 2010. : Пер. с англ. М. : здательский дом "Вильямс", 2011.</li> </ol>

1.0104/B30	2.Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	3.6 ECTS կրեդիտ
4.7 Ժամ/շաբ.	5.14/14/0	
6.5-րդ կիսամյակ	7.Եզրափակվիչ գնահատումն	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տարրեր բնագավառներում առաջացած հիմնական գործնական խնդիրների մաթեմատիկական մոդելների կառուցման, դրանց միջոցով այդ խնդիրների լուծման եղանակների հետազոտման և կիրառման ունակություն:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>ծանոթացնել գործույթների հետազոտում առարկայի հիմնախնդիրներին,</li> <li>ծանոթացնել տնտեսական տարրեր երևույթների և գործնթացների ուսումնասիրման համար կիրառվող հիմնական տնտեսա-մաթեմատիկական մոդելներին,</li> <li>բացատրել տարրեր տնտեսագիտական խնդիրները լուծելու մեթոդները:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացողություն</b>		
1. Ներկայացնելու գործույթների հետազոտման խնդիրների, մաթեմատիկական մոդելների կառուցման հանրահաշվական և երկրաչափական եղանակները:		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
1. կատարելու գծային ծրագրավորման, հոսքային և խաղային խնդիրների լուծման ալգորիթմական հետազոտումը,		
2. կիրառելու հիմնական ալգորիթմները գործնական խնդիրները լուծելիս,		
3. վերլուծելու առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
1. թիմում աշխատելու, համագործակցելու ունակություններ:		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա6.</b> համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,		
<b>Բ9.</b> կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարրեր համակարգչային ծրագրեր,		
<b>Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարրերակելու, վերլուծելու և մեկնարանելու տարրեր աղյուրներից հայթայթված տեղեկատվություններ:</b>		
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնատության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>դասախոսություններ</li> <li>շնորհանդեսներ</li> <li>գործնական աշխատանք</li> <li>ռեֆերաս</li> <li>ինքնուրույն խնդիրների լուծումներ:</li> </ul>		
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>		

<b>1-ին ընթացիկ քննություն</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b> , հարցատոմար պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:
<b>2-րդ ընթացիկ քննություն</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b> , հարցատոմար պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է
<b>Եղանակիչ քննություն</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):
<b>Ընթացիկ ստուգումներ</b> առավելագույնը <b>3 միավոր</b> . Կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.**Կոռորդինատային համակարգեր: **Թեմա 2.**Ոլորդի զիծը հարթության վրա: **Թեմա 3.**Երկրորդ կարգի կորեր: **Թեմա 4.**Սատրիցներ և որոշչներ: **Թեմա 5.**Գծային հավասարումների համակարգեր (Գառւսի մեթոդը, Կրամերի կանոնը): **Թեմա 6.**Գծային տարածություններ: Բազիս և չափողականություն: **Թեմա 7.**Վեկտորների գծային կախվածությունը: Սատրիցի ռանզը: **Թեմա 8.**Գծային օպերատորներ: **Թեմա 9.**Քառակուսային ձևեր: **Թեմա 10.**Էվկլիդեսյան տարածություններ: Օրթոգոնալ բազիս:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Տոնյան Ռ., Գործույթների հետազոտման մաթեմատիկական խնդիրներեր, Եր., 1999:
2. Սահալյան Ս., Սարգսյան Հ., Սարգսյան Ս., Տոնյան Ռ., Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, Ի հատոր, Եր., 1997:
3. Սահալյան Ս., Բեկնազարյան Ն., Հակոբյան Հ., Քերոբյան Խ., Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, II հատոր, Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, Եր., 2001:
4. Սահալյան Ս., Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ III Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, Խնդիրներ և վարժություններ, Եր., 2001:
5. Տոնյան Ռ., Դիվլիքս մաթեմատիկայի դասընթաց, Եր., 1999:
6. Խարար, Տեօրիա գրաֆօս, Մ, 1979.

1.0104/B23	2. Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3.2 ECTS կրեդիտ
<b>4.2.5 ժամ/շաբ.</b>	<b>5.10/0/0</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին գիտելիքներ հաղորդել հետազոտության պլանավորուման և մեթոդների վերաբերյալ:		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել հետազոտության նպատակը և կառուցվածքը</li> <li>• ուսումնասիրել պլանավորման փուլերը</li> <li>• ծանոթանալ հետազոտության մեթոդներին և դրանց կիրառմանը:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կինք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու հետազոտության պլանավորման կարևորությունը,</li> <li>2. ներկայացնելու հետազոտության փուլերը և դրանց իրականացման քայլերը,</li> <li>3. բացատրելու հետազոտության մեթոդաբանությունը:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. կատարելու հետազոտության թեմայի գրագետ ընտրություն,</li> <li>2. կիրառելու հետազոտության մեթոդները,</li> <li>3. վերլուծելու հավաքագրված տեղեկատվությունը, կատարելու եզրակացություններ և առաջարկություններ:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. թիմում աշխատելու, համագործակցելու ունակություններ</li> <li>2. Հետազոտության տարրեր տեսակներ պլանավորելու,</li> <li>3. Հետազոտությունները գնահատելու կարողություն:</li> </ol>		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա6.</b> համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,		
<b>Բ9.</b> կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգային ծրագրեր,		

**9.2.**որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղյուրներից հայթայթված տեղեկատվությունը:

**11. Վիճակիմ են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ
- շնորհանդեսներ
- գործնական աշխատանք
- հարցում
- ինքնուրույն աշխատանք
- խմբային աշխատանք
- քննարկում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

- 2 ընթացիկ քննություն՝ առավելագույնը 8 միավոր,
- ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 5 միավոր,
- ընթացիկ ստուգում՝ առավելագույնը 4 միավոր,
- մասնակցություն՝ առավելագույնը 3 միավոր

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Գիտությունը և գիտական հետազոտությունը: **Թեմա 2.** Գիտական հետազոտությունների մեթոդաբանությունը: **Թեմա 3.** Գիտահետազոտական աշխատանքների նախապատրաստական փուլը: **Թեմա 4.** Գիտական տեղեկատվության հավաքագրումը: **Թեմա 5.** Ուսանողների գիտական աշխատանքների պատրաստումը և ձևավորումը: **Թեմա 6.** Ուսանողական աշխատանքների պատրաստման և պաշտպանության առանձնահատկությունները:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Басаков М., От реферата до дипломной работы: Рекомендации студ-дентам по оформлению текста: Учеб. пособие для студентов вузов и кол-леджей. – Ростов н/Д, 2001.
2. Вахрин П., Методика подготовки и процедура защиты дипломных работ по специальности «Финансы и кредит»: Учеб. пособие. – М., 1999.
3. Кузин Ф., Магистерская диссертация: Методика написания, правила оформления и процедура защиты: Практ. пособие для студентов магистрантов. – М., 1998.
4. Сабитов Р., Основы научных исследований. Учебное пособие. Челябинск, 2002.
5. Уваров А., Дипломные и курсовые работы по экономическим специальностям: Практ. советы по подготовке и защите, М., 2000.

<b>1.0105/B26</b>	<b>2.Մաթեմատիկական անալիզ - 3</b>	<b>3.7 ECTS կրեդիտ</b>
<b>4.8 Ժամ/շաբ.</b>	<b>5.14/18/0</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումն</b>	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մաթեմատիկական անալիզի առավել կիրառական, վերլուծական մասերը:</b>		
<b>Դասընթացի խնդիրներ են.</b>		
#### **10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա7. Բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները,**

**Բ1. Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար**

**Բ2. Կատարելու գիտահետագրության աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմիստրիկ մեթոդներ:**

**Բ7. Մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արյունավետությունը, ներկայցնելու վերլուծությունից բխող եզրակացություններ,**

**Բ8. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները,**

**Բ10. Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր,**

**Գ2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպա-տակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղյուտներից հայթայթված տեղեկատվությունը:**

#### **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ
- գործնական համակարգչային դասընթացներ
- խմբային աշխատանք (Groups Փաթեթի) կիրառմամբ:

#### **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**1-ին ընթացիկ քննություն.** գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, **4 միավոր** առավելագույն արժեքավորների քայլը՝ 0.25:

**2-րդ ընթացիկ քննություն** գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, **3 միավոր** առավելագույն արժեքավորների քայլը՝ 0.25:

**Ընթացիկ ստուգում.** գրավոր՝ թեստային հարցեր **2 միավոր** առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:

**Մասնակցություն.** առավելագույնը՝ **3 միավոր**:

**Եզրակացիք քննություն.** բանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, **8 միավոր** առավելագույն արժեքավորների քայլը՝ 0.25:

#### **13. Դասընթացը բարկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Առաջին կարգի տարբերություն և գործողություններ լազերի հետ: Տարբերակային հավասարումներ:

**Թեմա 2.** Ստացիոնար ARMA պրոցեսներ: **Թեմա 3.** Կանխատեսում: **Թեմա 4.** Ոչ ստացիոնար ժամանակային շարքեր: Միավոր արմատի խնդիրը: **Թեմա 5.** Ուեզրեսիլ դինամիկ մոդելներ: **Թեմա 6.** Վեկտոր ավտոռեզրեսիլ մոդելներ և կրինտեզրացիոն մոդելներ: Սխալի ճշգրտման մոդելը: Պատճառականություն: **Թեմա 7.** Պանելային տվյալների գծային մոդելներ: Ֆիքսած և պատահական էֆեկտներով մոդելներ:

#### **14. Հիմնական գրականության ցանկ.**

- Hamilton J.D., Time series analysis (Vol. 2). Princeton: Princeton university press, 1994.
- Helmut Lütkepohl, New Introduction to Multiple Time Series Analysis, Library of Congress Control Number: 2005, 927322.
- Канторович Г.Г., Лекции по курсу «Анализ временных рядов». Экономический журнал ВШЭ, 2003.
- Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика, Москва, изд. “Дело”. 2004.

<b>1. 0201/B39</b>	<b>2. "ՀԲ" Ֆինանսներ - 2</b>	<b>3. 5 ECTS կրեդիտ</b>
<b>4. 4.5 ժամ/շաբ.</b>	<b>5. 9/9/0</b>	
<b>6. 7-րդ կիսամյակ</b>	<b>7. Եզրափակիչ գնահատումն</b>	
<b>8. Դասընթացի նպատակն</b> է՝ ներկայացնել ֆինանսների տնօրինման հիմնարար տեսական մոտեցումները, տարբեր գործնական իրավիճակներում ֆինանսական որոշումների կայացման և կիրառման ձևերը, ինչպես նաև ֆինանսական վերլուծության գործիքները, մեթոդները և սկզբունքները տարարքնույթ հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար:		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել ֆինանսների կառավարման անհրաժեշտությունը, նպատակները և խնդիրները,</li> <li>• ուսանողներին ծանոթացնել ֆինանսական որոշումների կայացման մեխանիզմների և մեթոդների հետ,</li> <li>• ուսանողներին զինել ֆինանսական ցուցանիշները հասկանալու, վերլուծելու և մեկնարաբանելու կարողություններով,</li> <li>• ուսանողներին ստորև նշված օգտվել մասնագիտական գրականությունից, վիճակագրական տվյալների աղյուրներից և հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործիքներից:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիկա մասնագիտական զիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները:</li> <li>2. Բացատրելու ֆինանսների կառավարման ժամանակակից տեսությունները և ֆինանսական վերլուծության մեթոդները:</li> </ol>		
<b>բ գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:</li> <li>2. Կատարելու ինքնուրույն ֆինանսական վերլուծություններ:</li> </ol>		
<b>գ ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատելու թիմում:</li> <li>2. Կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք:</li> <li>3. Մտածելու և արտահայտվելու ստեղծագործաբար:</li> </ol>		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա8. մեկնարաններու միջլրու և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,</b>		
<b>Բ5. քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,</b>		
<b>Բ6. տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար դեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,</b>		
<b>Բ7. մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ,</b>		
<b>Բ8. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները,</b>		
<b>Գ1. օգտվելու տեղեկատվության տարածեակ աղյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),</b>		
<b>Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնարաններու տարբեր աղյուրներից հայթայթված տեղեկատվությունը:</b>		
<b>Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելքիները, ինքնուրույն ձևակերպելու և լուծելու խնդիրներ:</b>		
<b>11. Կիրառվում են դասականդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• իրավիճակային սցենարների վերլուծություն</li> <li>• տնային առաջադրանքներ</li> <li>• խմբային/անզատական հետազոտական աշխատանք:</li> </ul>		
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքները գնահատելու համար</b>		<b>իրականացնելու մեթոդները</b>
<b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>4 միավոր</b> առավելագույն արժեքի ավորների քայլը՝ 0.25].		
<b>2-րդ ընթացիկ քննություն</b> թիմային կամ անհատական հետազոտական աշխատանքի պաշտպանություն <b>4 միավոր</b> առավելագույն արժեքովը.		
<b>Մասնակցություն.</b> առավելագույն՝ <b>3 միավոր</b>		
<b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր տեսական հարցեր և գործնական խնդիրներ, <b>9 միավոր</b> առավելագույն արժեքի ավորների քայլը՝ 0.25:		
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>		
<b>Թեմա 1. Ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատում:</b> <b>Թեմա 2. Կապիտալի արժեք և</b>		

կառուցվածք: **Թեմա 3.** Բիզնեսի գնահատում: **Թեմա 4.** Ռիսկ և եկամտաբերություն: **Թեմա 5.** Ֆինանսական վերլուծություն: **Թեմա 6.** Ֆինանսական պլանավորում:

#### **14.Հիմնական գրականության ցանկ**

- Brealey R., Myers S., and Allen F., "Principles of Corporate Finance", 13th edition, NY: McGraw Hill, New York, 2020
- Ross S., Westerfield R. and Jordan B., "Fundamentals of Corporate Finance", 12th edition, NY: McGraw Hill, New York, 2019
- Berk J. and DeMarzo P., "Corporate Finance", 5th edition, Global Edition Pearson Education, UK, 2021
- Корпоративные финансы и учет: понятия, алгоритмы, показатели: учебное пособие / В. В. Ковалев, Вит. В. Ковалев. — 3-е изд., перераб. и доп. — Москва : Проспект, 2020.
- Финансовый менеджмент: учебник / коллектив авторов; под ред. Н.И. Берзона и Т.В. Тепловой. — М. : КНОРУС, 2020.
- Современные корпоративные финансы и инвестиции: монография, / П.Н. Брусов, Т.В. Филатова, Н.П. Орехова. — М. : КНОРУС, 2020.
- Финансовый менеджмент: теория и практика, Стоянова Е.С. (ред.), 6-е изд. - М.: Изд-во "Перспектива", 2010.

#### **Լրացման գրականության ցանկ**

- Финансовый анализ предприятия с помощью коэффициентов и моделей: учебное пособие, В.Ю. Жданов, И.Ю. Жданов — М. : Проспект, 2018.
- Финансовый анализ: Учебно-методическое пособие. — М.: Экономический факультет МГУ имени М. В. Ломоносова, 2020.
- Оценка компаний: анализ и прогнозирование с использованием отчетности по МСФО / Ник Антилл, Кеннет Ли; Пер. с англ. — М.: Альпина Паблишер, 2013.
- Практикум по курсу «Финансы организаций» (корпоративные финансы). Учебное пособие. – СПб.: Изд-во СПбГУЭФ, 2011.

<b>1.0305/B44</b>	<b>2. Հարկային համակարգ</b>	<b>3. 4 ECTS կրեդիտ</b>
<b>4.3.5 ժամ/շաբ.</b>	<b>5.10/0/4</b>	
<b>6.9-րդ կիսամյակ</b>	<b>7.Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<b>8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի առանձնահատկություններին և դրա օրենսդրական ապահովմանն առնչվող հարցերին:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>ներկայացնել ՀՀ հարկային համակարգի իրավական հիմքը,</li> <li>յուրացնել հարկերի հաշվարկման ժամանակակից մեթոդները,</li> <li>սովորեցնել կազմել հարկային հաշվետվություններ,</li> <li>ձևավորել հարկային հաշվառման և պահանջման հմտություններ:</li> </ul>		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>Տարբերակել և առանձին շափանիշների հիման վրա դասակարգել հարկերը, նկարագրել հարկման հիմնական մեթոդների առանձնահատկությունները:</li> <li>Բնութագրել ՀՀ հարկային օրենսդրության և մասնավորապես Հայաստանի հանրապետության հարկային օրենսդրի հիմնական դրույթներն ու պատասխանատվություն սահմանող նորմերը:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>Ինքնուրույն կազմել հարկերի հաշվարկ և որոշել հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով բյուջե վճարման ենթակա հարկերի գումարները:</li> <li>Ինքնուրույն հաշվարկել հարկային իրավահայտումների կատարման դեպքում հարկային պատասխանատվության գումարները:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնարանելու տարրեր աղյուրներից հայթայթված տեղեկատվությունը:</li> <li>Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:</li> </ol>		
<b>10.Դասընթացը ձևակրում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա.7.քացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները,</b>		

**Բ2.**պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվական փաստաթղթերից,

**Բ5.**գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները,

**Բ8.**պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություն ներ,

**Գ2.**որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարրերակելու, վերլուծելու և մեկնարանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվություն:

**11.Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ,
- նախադեպերի վերլուծություն,
- խմբային աշխատանք,
- անհատական աշխատանք:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Առաջին ընթացիկ քննությունն անց է կացվում գրավոր հարցատոմսերով, հարցատոմսը պարունակում է երեք հարց՝ 5 առավելագույն միավորով, յուրաքանչյուրը համապատասխանաբար՝ 2, 2 և 1 միավոր,

Երկրորդ ընթացիկ քննությունն անց է կացվում գրավոր հարցատոմսերով, հարցատոմսը պարունակում է երեք հարց՝ 4 առավելագույն միավորով, յուրաքանչյուրը համապատասխանաբար՝ 2, 1 և 1 միավոր, ինքնուրույն աշխատանք՝ 6 միավոր,

ընթացիկ ստուգում՝ 5 միավոր:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Հարկերի տնտեսական բովանդակությունը: **Թեմա 2.** ՀՀ հարկային համակարգը: **Թեմա 3.** ՀՀ պետական հարկերը: **Թեմա 4.** ՀՀ տեղական հարկերը: **Թեմա 5.** Հարկերին փոխարինող հարկեր: **Թեմա 6.** Հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում:

**14.Հիմնական գրականության ցանկ**

1. Հարույրունյան Վ., Հարկեր և հարկագանձում, Եր., 2010:
2. ՀՀ հարկային օրենսգիրք:
3. Խաչատրյան Կ.Գ., Հարկեր և հարկային քաղաքականություն, Եր., 2014:
4. Перов А., Налоги и налогообложение. М., 2008.

**Լրացնիշ գրականության ցանկ**

1. Թամազյան Ա., Հարկային օրենսդրության հիմունքները, Եր., 2003:
2. Հարույրունյան Վ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագորման հիմնահարցերը ՀՀ-ում, Եր., 2003:

1.0201/B38	2.Միկրոտնտեսագիտություն	3.6 ECTS կրեդիտ
4.7 Ժամ/շաբ.	5.18/0/10	
6.5-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ զնահատումն	

**8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հիմնական միկրոտնտեսական օրենքները և դրանց միջև գոյություն ունեցող օրինաչափությունները, տնտեսվարող սուբյեկտների վարքագիր ուսումնասիրման համար կիրառվող տնտեսա-մարթնեմատիկական մոդելները և մեթոդները, ինչպես նաև այս կամ այն միկրոտնտեսական հիմնախնդրի վերաբերյալ ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունները և գործիքակազմը:**

**Դասընթացի խնդիրներեն.**

- ուսանողներին ներկայացնել հիմնական միկրոտնտեսագիտական օրենքները և դրանց միջև գոյություն ունեցող օրինաչափությունները,
- ուսանողներին ծանոթացնել արտադրողի և սպառողի տեսությունների, շուկայական հավասարակշռության մոդելների, շուկայի բացերի (հանրային բարիքներ, տեղեկատվական ասիմետրիաներ, արտաքին ազդակներ և մենաշնորհային շուկաներ) և դրանց կարգավորման եղանակների հետ,
- ուսանողներին զինել միկրոտնտեսագիտական ցուցանիշները հասկանալու, վերլուծելու և մեկնարանելու կարողություններով,
- ուսանողներին սովորեցնել օգտվել մասնագիտական գրականությունից, վիճակագրական տվյալների աղբյուրներից և հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործիքներից:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝**

**ա. մասնագիտական զիտելիք և իմացություն**

1. սահմանելու հիմնական միկրոտնտեսական հասկացությունները, օրենքները և դրանց միջև դրսուրվող օրինաչափությունները,
2. ներկայացնելու սպառողի և արտադրողի տեսությունները, նրանց վարքագիր օպտիմալացման

պայմանները և դրանց վրա ազդող գործուները,

3. մեկնաբանելու շուկայական հավասարակշռության մոդելները, շուկայի բացերը (հանրային բարիքներ, արտաքին արդյունքներ, տեղեկատվական ասիմետրիաներ ու մոնոպոլիաներ) և դրանց կարգավորման եղանակները:

**Ք. գործնական մասնագիտական կարողություններ**

1. վերլուծելու տիպային տնտեսա-մաթեմատիկական իրավիճակները և իրականացնելու ինքնուրույն հետազոտություններ:

**Գ. ընդհանրական/իոնանցելի կարողություններ**

1. աշխատելու թիմում,
2. կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**

**Ա8. Մեկնաբանելու միջուկ և մակրոտնտեսագիտության հիմնական հավացությունները, քննարկելու գորբալ և լրկալ շուկաների հիմնախնդիրները:**

**Բ5. քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,**

**Բ6. տարրեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար դեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր**

**Բ10. կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարրեր համակարգչային ծրագրեր,**

**Չ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարրերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարրեր աղյուններից հայթայթված տեղեկատվություննը,**

**Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքիները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:**

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ,
- թեստային վարժություններ և խնդիրների լուծում,
- բանավեճեր, դեբային խաղեր և իրավիճակային սցենարների քննարկումներ,
- հետազոտական բնույթի թիմային աշխատանքներ,
- տնային առաջարկանքներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**1-ին ընթացիկ քննություն - 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:.**

**2-րդ ընթացիկ քննություն - 4 միավոր առավելագույն արժեքով արժեքով, միավորների քայլը՝ 0.25:**

**Ինքնուրույն աշխատանք -առավելագույնը 4 միավոր:**

**Եզրափակիչ քննություն . բանավոր տեսական հարցեր և գործնական խնդիրներ, 8 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:**

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1. Սպառման տեսության հիմունքները: Թեմա 2. Օպտիմալ ընտրություն: Թեմա 3 Պահանջարկի և բարեկեցության վերլուծություն: Թեմա 4. Օպտիմալ ընտրությունը էնդոգեն եկամտի և անորոշության պայմաններում: Թեմա 5. Արտադրողի տեսության հիմունքներ: Թեմա 6. Արտադրության ծավալի և զնի որոշումը տարրեր շուկայական կառուցվածքների դեպքում: Թեմա 7. Ըստհանուր հավասարակշռության տեսություն: Թեմա 8. Շուկայի բացերը և դրանց կարգավորումը:**

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Hal R. Varian, "Intermediate Microeconomics: A Modern Approach", W. W. Norton & Company, Inc., New York, 2010.
2. R. Serrano and A. Feldman, "A Short Course in Intermediate Microeconomics with Calculus", Cambridge University Press, Cambridge 2013.
3. W. Nicholson and C. Snyder, "Microeconomic Theory: Basic Principles and Extensions", Thomson/South-Western, Mason, 2008.
4. Perloff J., "Microeconomics: Theory and Applications with Calculus", 4th Edition, Pearson Education Limited, Harlow, 2018.
5. Mas-Colell A. and Whinston M., "Microeconomic Theory", Oxford University Press, Oxford, 1995.
6. Silberberg E. and Wing S., "The Structure of Economics", McGraw Hill, New York, 2001.
7. Simon C. and Blume L., "Mathematics for Economists", W. W. Norton & Company, New York, 2010.

1.0201/B37	2.Հաշվապահական հաշվառում	3.5 ECTS կրեդիտ
4.6 ժամ/շաբթի	5.10/14/0	
6.7-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
8.Դասընթացի նպատակն	է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվապահական հաշվառման կարտրության, մեթոդի տարրերի և	

իրականացման սկզբունքների մասին: Պարզաբանել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվառման առանձնահատկությունները, իրականացման ձևերը: Ինչպես նաև ուսանողների մոտ ձևափորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամարանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ:

### Դասընթացի խնդիրներն են.

- մեկնաբանել հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը, հաշվային պլանը
- բացատրել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների գործառույթները, խնդիրները և առանձնահատկությունները,
- մեկնաբանել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի հաշվառման մեխանիզմները,
- բացատրել եկամուտների և ծախսերի դասակարգումը և հաշվառումը,
- ուսուցանել օգտվել հաշվային պլանից, հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելիս,
- ուսանողներին զինել հաշվապահական փաստաթղթեր լրացնելու և ստուգելու, հաշվապահական խնդիրներ լուծելու, գործառնությունների համար հաշվապահական ձևափորումներ գրելու կարողություններով:

### 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝

#### ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և բացատրելու հաշվապահական հաշվառման առարկան, մեթոդը, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը:
2. Բացատրելու ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների առանձնահատկությունները, ֆինանսական հաշվառման գործառույթները, խնդիրները:
3. Սահմանելու, մեկնաբանելու, հաշվառելու կազմակերպության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը:
4. Մեկնաբանելու դասընթացի սահմաններում նախատեսված մասնագիտական տերմինները:

#### բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Աշխատելու հաշվային պլանով, գործառնությունների համար գրել հաշվապահական ձևափորումներ, լուծելու հաշվապահական խնդիրներ, լրացնելու և ստուգելու հաշվապահական փաստաթղթեր:
2. Օգտվելու հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելու:
3. Տարրերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարրեր աղյուրներից հայթայթված տեղեկատվությունը:

#### գ. ընդհանրասկան/փոխանցելի կարողություններ

1. Օգուվելու տեղեկատվության տարատեսակ աղյուրներից:
2. Աշխատելու թիմում, շփվելու մասնագիտական լեզվով:
3. Սննայս իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու, կատարելու առաջարկություններ:

### 10. Դասընթացը ձևափորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա5. Ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը,

Ա9. մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները,

Բ6. տարրեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար դեկավարի օգնությամբ իրականացնելու հետագոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր

Բ7. կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարրեր համակարգչային ծրագրեր,

Բ8. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամարանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն,

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,

Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, դեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատրաստակություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար,

Գ6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր

կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար,

**Գ9.** Վերլուծելու և եզրահանգումներ անելով՝ դրսեռքելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղածագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարրեր լուծումներ առաջարկելու համար:

**11. Վիրատիւմ են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ,
- նախադեպերի վերլուծություն,
- սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր,
- գործնական և խմբային աշխատանքներ,
- հետազոտական աշխատանքներ, խնդիրներ, ռեֆերատներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

- 1-ին ընթացիկ քննություն՝ գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25.
- 2-րդ ընթացիկ քննություն՝ գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25.
- **Ինքնուրույն աշխատանք՝ գրավոր՝ բանավոր ներկայացում, 3 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25.**
- **Եզրափակիչ քննություններ՝ բանավոր, 9 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:**

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից**

**Թեմա 1.** Հաշվապահական հաշվառման առարկան և մեթոդը: Հաշվապահական հաշվառման տեսակները, սկզբունքները, կարգավորումը. **Թեմա 2.** Հաշվապահական հաշվելչիոն /Փինանսական վիճակի մասին հաշվետվություն/ և հաշիվներ: Կրկնակի գրանցում: Գնահատում և կալկուլացիա: Փաստաթղթավորում և գույքագրում: **Թեմա 4.** Հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը, հաշվային պլան: **Թեմա 5.** Կազմակերպության ակտիվների հաշվառում **Թեմա 6.** Կազմակերպության պարտավորությունների հաշվառումը: **Թեմա 7.** Եկամուտների և ծախսների հաշվառումը: Տնտեսավարման ֆինանսական հետևանքների ձևավորումը և հաշվառումը: **Թեմա 8.** Սեփական կապիտալի հաշվառումը: **Թեմա 9.** Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, ներկայացման կարգը և փոխադարձ կապը:

**Հիմնական գրականության ցանկ**

1. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, 2002:
2. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ, 2012:
3. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, 2012:
4. ՀՀ Հարկային օրենսգիրը 2016:
5. ՀՀ Աշխատանքային օրենսգիրը 2016:
6. Սարգսյան Ա., Համբարձումյան Ռ., Մարգանյան Ա., Օգանեզովա Ն., և ուրիշներ /Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ/, Եր., 2014:
7. Մովսիսյան Թ., Հաշվապահական հաշվառում, Եր., 2015:
8. Զուրաբյան Կ., Գասպարյան Ն., Հաշվապահական հաշվառում: /Ուսումնական ձեռնարկ/, Եր., 2011:
9. Ֆինանսական հաշվառման հիմունքներ, Հայաստանի հաշվապահների և առողջապահության ասոցիացիա, Եր., 2012:
10. Кондраков Н.П. Бухгалтерский учет: Учебное пособие. 5-е изд., перераб и доп. Москва ИНФРА-М, 2008
11. M.Powers, B.Needles, S.Crosson, Financial and Managerial, Publisher: Cengage Learning; 10 edition (January 23)

1.0201/B43	2."ՀՀ" Մակրոտնտեսագիտություն	3.6 ECTS կրեդիտ
4.7 Ժամ/շաբ.	5.18/0/10	
6.6-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հիմնական մակրոտնտեսական հասկացությունները և դրանց կիրառությունները, մակրոտնտեսագիտության ոլորտում առկա տնտեսամաթեմատիկական մոդելները և մեթոդները, ինչպես նաև այս կամ այն մակրոտնտեսական հիմնախնդրի վերաբերյալ ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունները և գործիքակազմը:		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին ներկայացնել հիմնական մակրոտնտեսական հասկացությունները և դրանց կիրառությունները,</li> <li>• ուսանողներին ծանոթացնել մակրոտնտեսագիտության ոլորտում առկա տնտեսա-մաթեմատիկական մոդելների և մեթոդների հետ,</li> </ul>		

- ուսանողներին զինել մակրոտնտեսական ուցանիշները հասկանալու, վերլուծելու և մեկնարակարողություններով,
- ուսանողներին սովորեցնել օգուվել մասնագիտական գրականությունից, վիճակագրական տվյալների հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործիքներ

## **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝**

### **ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- մեկնաբանելու մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները,
- վերլուծելու հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա փոխկապվածությունները:

### **բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- վերլուծելու տիպային տնտեսա-մարեմատիկական իրավիճակները,
- կիրառելու տնտեսա-մարեմատիկական մոդելները այս կամ այն հիմնախնդրի վերաբերյալ ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելու համար:

### **գ. ընդհանր ական/փոխանցելի կարողություններ**

- աշխատելու թիմում,
- կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք,
- մտածելու և արտահայտվելու ստեղծագործարար:

## **10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա7.** բացահայտելու տնտեսագիտական տարրեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները

**Ա8.** մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,

**Բ5.** քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,

**Բ6.** տարրեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար դեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,

**Գ2.**որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարրերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարրեր աղյուրներից հայթայթված տեղեկատվությունը,

**Գ3.**բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ

**Գ4.**պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքներ, վարելու գիտական բանավեճեր,

**Գ6.**աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ինքնուրույն ձևակերպելու և լուծելու խնդիրներ:

## **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ,
- թեստային վարժություններ և խնդիրների լուծում,
- բանավեճեր, դերային խաղեր և իրավիճակային սցենարների քննարկումներ,
- հետազոտական բնույթի թիմային աշխատանքներ,
- տնային առաջադրանքներ:

## **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**1-ին ընթացիկ քննություն - 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:**

**2-րդ ընթացիկ քննություն. հետազոտական աշխատանք - 4 միավոր առավելագույն արժեքով,**

**Ինքնուրույն աշխատանք - 4 միավոր առավելագույն արժեքով,**

**Եզրափակիչ քննությունն .բանավոր, 8 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:**

## **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ազգային հաշիվների համակարգ: **Թեմա 2.** Տնտեսությունը երկարաժամկետ հատվածում («դրամական» տնտեսություն): **Թեմա 3.** Փող և ինֆլյացիա: **Թեմա 4.** Բաց տնտեսություն: **Թեմա 5.** Տնտեսությունը կարգաժամկետ հատվածում: Գործարար ցիկլեր: **Թեմա 6.** Համախառն առաջարկի և համախառն պահանջարկի դինամիկ մոդել: **Թեմա 7.** Սպառում: **Թեմա 8.** Ներդրումներ: **Թեմա 9.** Փողի պահանջարկը և առաջարկը: **Թեմա 10.** Գործարկություն: **Թեմա 11.** Հարկաբյուջետային բաղաքանություն: **Թեմա 12.** Դրամավարկային տեսություն: **Թեմա 13.** Բաց տնտեսություն: **Թեմա 14.** Սոլոյի տնտեսական աճի մոդելը: **Թեմա 15.** Տնտեսական աճի Ռամսեյի մոդելը:

## **14. Հիմնական գրականության ցանկ**

- D. Romer, "Advanced Macroeconomics" 4th edition
- D. Acemoglu, "Introduction to Modern Economic Growth"
- J. Garin, R. Lester and E. Sims, "Intermediate Macroeconomics"
- N.G. Mankiw "Macroeconomics"

1.0201/B35	2.Մենեջմենթի հիմունքներ	3.4 ECTS կրեդիտ
4.4.5 Ժամ/շաբաթ	5.9/0/9	

<b>6.6-րդ կիսամյակ</b>	<b>7.Առանց եզրափակիչ գնահատման</b>
<b>8.Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մենցմենթի սկզբունքներին, մենցերների ֆունկցիաներին, էթիկային, ռազմավարական պլանավորմանը, հաղորդարկցման հմտություններին, աշխատողների մոտիվացիայի տեսություններին, սկզբունքներին, կիրառման հմտություններին, թիմային աշխատանքին, կիրառման անհրաժեշտությանը, կրնակիլտային իրավիճակների կառավարմանը, լիդերության տեսություններին և ժամանակակից ասպեկտներին:</b>	
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>	
<ul style="list-style-type: none"> <li>ուսանողներին ծանոթացնել կառավարման հիմնարար տեսական դրույթներին և ժամանակակից կառավարչական մտքի զարգացման հիմնական ուղղություններին,</li> <li>խթանել ուսանողների հետաքրքրությունը կառավարման պրակտիկ գործունեության նկատմամբ,</li> <li>նպաստել ապագա կառավարչի մշակույթի և մտածողության ձևավորմանը,</li> <li>բացահայտել կառավարման մարդարանական բնույթը,</li> <li>ապագա կառավարիչներին /մենցերներին/ գիտել կառավարման տեխնոլոգիաներով, մեթոդներով, ձևերով, միջոցներով և հնարներով աշխատելու կարողություններով:</li> </ul>	
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>	
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>	
1. ներկայացնելու կառավարման հիմնարար տեսական դրույթները և ժամանակակից կառավարչական մտքի զարգացման հիմնական ուղղությունները.	
2. բացահայտելու կառավարման մարդարանական բնույթը:	
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>	
1. կիրառելու կառավարման մծակույթը և մտածողությունը,	
2. օգտագործելու կառավարման տեխնոլոգիաները, մեթոդները:	
<b>գ. ընդհանուրական/փոխանցելի կարողություններ</b>	
1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ)կիրառելու տեսական գիտելիքները գործնականում,	
2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:	
<b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>	
<b>Ա2. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները,</b>	
<b>Ա7. բացահայտելու տնտեսագիտական տարրեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները,</b>	
<b>Բ7. մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ,</b>	
<b>Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),</b>	
<b>Գ4. պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքներ, վարելու գիտական բանավեճեր,</b>	
<b>Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, խնդնուրույն ձևակերպելու և լուծելու խնդիրներ:</b>	
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>	
<ul style="list-style-type: none"> <li>դասախոսություններ,</li> <li>քննարկումներ,</li> <li>նախազգերի մեթոդ,</li> <li>խճանկարի մեթոդ,</li> <li>դերային խաղերի մեթոդ,</li> <li>լսարանային ցուցադրություններ:</li> </ul>	
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>	
<ul style="list-style-type: none"> <li><b>Առաջին ընթացիկ քննություն իրականացվում է թեստի միջոցով՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</b> Թեստը պարունակում է 14 հարց, յուրաքանչյուրը 0.5 միավոր:</li> <li><b>Երկրորդ ընթացիկ քննություն իրականացվում է բանակոր: Հարցատումը պարունակում է 2 հարց և մեկ խնդիր՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:</b></li> <li><b>Ընթացիկ ստուգում՝ 4 միավոր առավելագույն արժեքով</b></li> <li><b>Սամանակցության՝ 2 միավոր առավելագույն արժեքով,</b></li> <li><b>Ինքնուրույն աշխատանքի /հետազոտություն կամ ռեֆերատ/ - 5 միավոր առավելագույն արժեքով</b></li> </ul>	
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>	
<b>Թեմա 1. Մենցմենթի ծագումն ու զարգացման նախադրյալները: Թեմա 2. Մենցմենթի արտաքին և ներքին</b>	

**14.Հիմնական գրականության ցանկ**

1. Дафт Р., Менеджмент, Питер , 2015.
2. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, М., 2015.
3. Роббинз С., Коутер М., Менеджмент, М., 2007 .
4. Томсон А., Стриклэнд А. Стратегический менеджмент, М., 2006.
5. Веснин В., “Менеджмент”; Москва, 2011.
6. Пивоваров С., Максимцев Н., “Сравнительный менеджмент”-СПб. 2008.
7. Սուլվարյան Յու., Մենեջմենթ, Եր., 2002:

1.0201/B41	2.Բանկային գործ	3.4 ECTS կրեդիտ
<b>4.4.5 ժամ/շաբթիկ</b>	<b>5.9/0/9</b>	
<b>6.7-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումով</b>	
<b>8.Դասընթացի նպատակն է ձևավորել բանկային գործունեության հիմունքների, բանկերի գործունեության կարգավորման օրենսդրական դաշտի, բանկերի կողմից իրականացվող գործանությունների և կենտրոնական բանկի խնդիրների վերաբերյալ գիտելիքներ:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• բացատրել բանկային գործունեության հետ կապված հասկացությունները,</li> <li>• ծանոթացնել բանկային գործունեությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթերին,</li> <li>• ներկայացնել ժամանակակից բանկային գործի տեսության և պրակտիկայի հիմունքները,</li> <li>• ձևավորել տիպիկ բանկային իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու ունակություն:</li> </ul>		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիկ՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ֆինանսական համակարգը, բանկային ոլորտը,</li> <li>2. մեկնաբանելու ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությանը, ինչպես նաև ՀՀ-ում ֆինանսական կառույցների՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային և ավանդային գործառնությունները,</li> <li>3. բացատրելու Վենտրոնական Բանկի՝ որպես ֆինանսական համակարգի կայունության և գների կայունության ապահովման հիմնական պատմահատուի գործառույթները և դերը:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. գնահատելու բանկերի դերն ու նշանակությունը տնտեսության կայացման և զարգացման գործում,</li> <li>2. վերլուծելու կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականությունը և բնութագրելու ֆինանսական համակարգի և գնաճի կայունությունը բնորոշող ցուցանիշները,</li> <li>3. ինքնուրույն իրականացնելու առնտրային բանկի տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների գնահատում և վերլուծություն:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/իդեանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. արագորեն և հմտորեն կողմնորոշվելու ֆինանսական շուկայում՝ հստակ պատկերացում կազմելով բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող ամենաստարելի ծառայությունների մասին,</li> <li>2. գործելու վերահսկող մարմնի՝ Վենտրոնական բանկի կողմից սահմանվող «խաղի կանոններով», այսինքն այն նորմատիվային դաշտով, որով և առաջնորդվում են ՀՀ ֆինանսական կազմակերպությունները:</li> </ol>		
<b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b>		
<b>Ա4. ներկայացնելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները,</b>		
<b>Ա7.բացահայտելու տնտեսագիտական տարրեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները,</b>		
<b>Բ4. չափելու և գնահատելու ֆինանսական ռիսկերը,մշակելու ռիսկերի նվազեցման ստրատեգիա,</b>		
<b>Բ6. տարրեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար դեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,</b>		
<b>Բ9.գնահատելու բանկերի ֆինանսական կայունությունը, բացահայտելու բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդրող գործոնները,</b>		
<b>Ջ2.որոշակի փաստաթղթների հիմնարկումների նպատակով հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու տնտեսագիտական տարրեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը</b>		
<b>Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ:</b>		
<b>11.Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• սեմինարներ, բնուարկումներ և բանավեճեր,</li> </ul>		

- խմբային աշխատանքներ:

**12.Գնահատման մեթոդները և չսփանիշներն են.**

- **1-ին ընթացիկ քննություն** գրավոր՝ թեսային հարցեր և գործնական խնդիրներ, 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:
- **2-րդ ընթացիկ քննություն** գրավոր՝ թեսային հարցեր և գործնական խնդիրներ, 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:
- **Ինքնուրույն աշխատանք**. **3 միավոր առավելագույն** արժեքով:
- **Եզրափակիչ քննությունը** քանակոր հարցում, **9 միավոր առավելագույն արժեքով**, միավորների քայլը՝ 0.25:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Բանկերի ծագումը և բանկային համակարգի ձևավորումը: **Թեմա 2.** Բանկային գործունեության առանձնահատկությունները և բանկային համակարգի ձևավորումը ՀՀ-ում: **Թեմա 3.** Կենտրոնական բանկերի դերը և գործառությունները: **Թեմա 4.** Առևտրային բանկերը և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունները: **Թեմա 5.** Առևտրային բանկերի գործառնությունները: **Թեմա 6.** Բանկային գործունեության վերահսկողությունը և կարգավորումը: **Թեմա 7.** Միջազգային բանկային գործառություններ:

**14.Հիմնական գրականության ցանկ**

1. Բաղանյան Լ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկեր, Եր., 2010:
2. Ասատրյան Բ., Բանկային գործ, Եր., 2013:
3. «Экономическая теория денег, банковского дела и финансовых рынков», Ф. Мишкин, 1999.
4. «Банки и банковские операции», М. Лаврушин, 2016.
5. «Банковское дело», М.Лаврушин, М. 2009.
6. «Деньги, кредит, банки», М.Владимирова, А.Козлов, М. 2006.
7. [www.cba.am](http://www.cba.am).
8. [www.imf.org](http://www.imf.org).

<b>1.0201/B42</b>	<b>2.Սարքեթինգի հիմունքներ</b>	<b>3.4 ECTS կրեդիտ</b>
<b>4.4.5 Ժամ/շաբ.</b>	<b>5.9/0/9</b>	
<b>6.9-րդ կիսամյակ</b>	<b>7.Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<b>8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայագիտության ընդհանուր հարցերի տեսությանը և պրակտիկային, շուկայագրման գործունեության կոնկրետ ուղղություններին:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են.</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել մարքեթինգի պատմական զարգացումը, դեռն ու տեղը կազմակերպության գործունեության մեջ,</li> <li>• ուսումնասիրել մարքեթինգի հիմնական հասկացությունները,</li> <li>• յուրացնել շուկայի հետազոտման մեթոդները,</li> <li>• ձևավորել շուկայական զարգացումների կանխատեսման հմտություններ,</li> <li>• ձևավորել նորարարական մտածելակերպ,</li> <li>• սովորեցնել գնահատել կազմակերպության մարքեթինգային գործունեությունը և կազմել մարքեթինգի պլան:</li> </ul>		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և խմացություն</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Անկախաբանելու շուկայագիտության ընդհանուր հարցերի տեսությունը և պրակտիկան,</li> <li>2. Ներկայացնելու առաքման և գնային քաղաքականության, ինչպես նաև գովազդի կազմակերպման մեխանիզմները:</li> </ol>		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Իրականացնելու շուկայագիտական հետազոտություններ համապատասխան հետազոտության հիման վրա,</li> <li>2. Աշխատելու և առաջարկելու արտադրանքի իրացումը խթանող միջոցառումներ:</li> <li>3. Գնահատելու գովազդի տարրեր տեսակների արդյունավետությունը առանձին ապրանքատեսակների համար:</li> </ol>		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. համարելու ստացած գիտելիքները այլ դասընթացների համանման թեմաներն ուսումնասիրելիս:</li> </ol>		
<b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Ա7.քացահայտելու տնտեսագիտական տարրեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները,</b>		
<b>Ա8.մեկնաբանելու միկրո և մակրոտնեսագիտության հիմնական հասկացությունները,քննարկելու գլոբալ շուկաների հիմնախնդիրները,</b>		

- Բ5.** քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,  
**Բ6.** տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,
- Գ4.** պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
- Գ6.** աշխատեուլ խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ինքնուրույն ձևակերպելու խնդիրներ և լուծելու:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ,
- սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր,
- խմբային աշխատանքներ,
- ռեֆերատներ,
- անհատական աշխատանք:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Առաջին ընթացիկ քննությունն անց է կացվում հարցատոմսերով, հարցատոմսը պարունակում է երեք հարց-  
**4 առավելագույն** միավոր արժեքով,

Երկրորդ ընթացիկ քննությունն անց է կացվում հարցատոմսերով-  
**5 առավելագույն** միավոր արժեքով,

Ինքնուրույն աշխատանք- 7 միավոր արժեքով,

Ընթացիկ ստուգում- 3 միավոր արժեքով,

Մասնակցություն-1 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Սարքերին գի էռույնը: **Թեմա 2.** Ընկերության մարքերին մաքայր: **Թեմա 3.** Մարքերին մաքայր: Հետազոտությունների համակարգը: **Թեմա 4.** Շուկա: Շուկայի հատվածավորման գործնթաց: **Թեմա 5.** Ապրանք: **Թեմա 6.** Մարքերին մաքայրին կոմունիկացիաների համակարգը: **Թեմա 7.** Մարքերին կազմակերպումը ձեռնարկությունում:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Маркетинг-менеджмент, Филип Котлер, К.Л.Келлер, 12-е изд, ПИТЕР, 2009.
2. Основы маркетинга, Филип Котлер, Г. Армстронг, Д. Сондерс, В. Вонг. изд Вильямс, 2007.
3. Реклама, Е.Ромат, изд ПИТЕР, 2008.
4. Маркетинг, Гольдштейн Г.Я., Катаев А.В. ТРТУ, 1999.
5. Психология маркетинга и рекламы, Клаус Мозер, изд Гуманитарный Центр, Харьков 2004.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՍՍԱՍ  
(ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)**

1.0201/B45	2. Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի հկոնոմիկա	3.4ECTS կրետիս
4.3.5 ժամ/շաբ.	5.9/0/5	
6.8-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
<b>8. Դասընթացի նպատակն է՝ ուսուցանել աշխատաշուկայում մարդկային ռեսուրսի ձևավորման օրինաչափությունները և բաշխումը: Աշխատանքի միջուկային գործությունները և աշխատամեջ ընտրությունները: Աշխատաշուկային դաշտը: Ուսանողին հասանելի դաշտները գործազրկության հիմնախնդիրները: Աշխատաշուկային ներքին և արտաքին տեղաշարժերը, ինչպես նաև արհմիությունների դերը գործատու- աշխատուժ փոխարարերություններում:</b>		
<b>Դասընթացի խնդիրները</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Ուսանողին ուսուցանել դիսցիպլինի ուսումնասիրության արարկան և մեթոդները:</li> <li>• Զևագործել իմացություն աշխատանքային ռեսուրսների ձևավորման, բաշխուման և գրադադարձության գործնթացում:</li> <li>• Ծանոթացնել աշխատանքի շուկայի ընդհանուր բնութագրերին:</li> <li>• Զևագործել տնտեսագիտական մտածողություն աշխատանքի առաջարկի և պահանջարկի վերաբերյալ:</li> <li>• Աշխատուժի որակ հասկացություն և ներդրումներ մարդկային կապիտալում: Աշխատուժի տեղաշարժը աշխատաշուկայում, գործազրկության հիմնախնդիրները:</li> <li>• Ապահովել գիտելիքներ աշխատանքի ներքին շուկայի վերաբերյալ, աշխատանքի կազմակերպման, վարձատրության, ինչպես նաև խթանման գործնթացում:</li> <li>• Ուսանողին ուսուցանել արհմիությունների գործունեության վերաբերյալ դրույթները, աշխատողի իրավունքները և պարտականությունները:</li> <li>• Ծանոթացնել աշխատանքի միջազգային կազմակերպություններին:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիկ՝</b>		

## **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**

- Կվերարտադրի աշխատանքի էկոնոմիկա դասընթացի բովանդակությունը
- Կմատնանշի աշխատանքի շուկայի առանձնահատկությունները
- Կսահմանի և կրացատրի աշխատանքի առաջարկն ու պահանջարկը, արտադրողականությունը
- Կմատնանշի աշխատանքի միջազգային կազմակերպությունների դերը

## **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**

- ընդհանրացված կվերլուծի աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունները
- կվերլուծի և կհամեմատի գործազրկության տեսակները, կահված իրավիճակից
- կհամակարգի աշխատաշուկայի ներքին և արտաքին տեղաշրջերը, աշխատանքային հարաբերությունները և կառավարման մեթոդները

## **Գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (Եթե այդպիսիք կան)**

- Կտիրապետի ձեռնարկության և աշխատանքի շուկայի մակարդակով աշխատանքային հարաբերությունների վերլուծության և կառավարման մեթոդներին:
- Կտիրապետի աշխատանքի առաջարկի և պահանջարկի, արտադրողակության վերլուծությանը
- Կտիրապետի միջազգային կազմակերպությունների մակարդակով աշխատաշուկայի առանձնահատկություններին:

## **10. Դասընթացը ձևակրում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա8. Մեկնարանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,**

**Ա9. Մեկնարանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները,**

**Բ5. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները,**

**Գ2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնարանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը,**

**Գ7. Ճշշուշ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:**

## **11. Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- Խոսքային մեթոդներ /դասախոսություն, բացատրում, պատմում, երկխոսություն/
- Զննական մեթոդներ /այսպիսի ցուցադրում և այլն/
- Գործնական մեթոդներ
- Տրամաբանական մեթոդներ
- Ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ
- Հետաքրքրությունների խթանման մեթոդներ
- Համագործակցային ուսուցման մեթոդներ
- Քննադատական մտածողության մեթոդներ
- Խմբային աշխատանքի մեթոդներ
- Վերահսկողության մեթոդներ

## **12. Գնահատման մեթոդներն ու չափանիշներն են.**

- Առաջին ընթացիկ քննություն** իրականացվում է թեսախ միջոցով՝ **4 միավոր առավելագույն արժեքով:** Թեսախ պարունակում է 14 հարց, յուրաքանչյուրը 0.5 միավոր:
- Երկրորդ ընթացիկ քննություն** իրականացվում է բանափոր: Հարցատոմսը պարունակում է 2 հարց և մեկ խնդիր՝ **5 միավոր առավելագույն արժեքով:** Միավորների քայլը 0.5 է:
- Սասակցության 2 միավոր** առավելագույն արժեքով,
- Բնիտուրույն աշխատանք /հետազոտություն կամ ռեֆերաս/ 5 միավոր**,
- Ըթացիկ սոուզում 4 միավոր առավելագույն արժեքով:**

## **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Աշխատանքի էկոնոմիկայի առարկան և մեթոդը: Բնակչության աշխատնաքայլին կառուցվածքը և գրաղվածությունը: Աշխատանքի շուկա: **Թեմա 2.** Աշխատանքի առաջարկը, աշխատանքի պահանջարկը

